ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

Какой светильник разума угас!
Какое сердце биться перестало!

Некрасов

Ուզում եմ այսպես խորագրել այնքա՜ն անժամանակ և այնքա՜ն ողբերգական մահով մեզնից բաժանված բանաստեղծի մասին ասելիք խոսքս... սոսկ անունով։ Չէ՞ որ Պարույր Սևակն այժմ և ընդմիշտ դարձավ մեկը այն նվիրական անուններից, որոնք ինքնին, առանց շքեղ մակդիրների, խորհրդանշում են մայրենի լեզվի թովչանք և մտքի խոյանք, սրտի թրթիռ և հոգու կորով, լույսի բաղձանք և արթուն խիղճ...

Ասում են՝ վերքի կսկիծն առավել զգալի է դառնում մի որոշ ժամանակ անց։

Ասում են նաև՝ լեռան բարձրությունը որոշելու համար տարածություն է հարկավոր, հեռացում։

Ճիշտ են թե՛ մեկը և թե մյուսը։
Վերքը դեռ շատ է թարմ։

Եվ Պարույր Սևակը դեռ երեկ էր, որ մեր կողքին, մեզ հետ զրուցում էր, վիճում, կատակում, ժպտում, և երբեմն՝ թախծում, մռայլվում, լռում։

Իսկ այժմ, երբ նա լռել է ընդմիշտ, նրա հետ զրուցելու այլևս անիրականանալի փափագը ինչ-որ չափով հագեցում է ստանում նրան ընթերցելով։ Ընթերցում, վերընթերցում ես Պարույր Սևակի բանաստեղծություններն ու պոեմները, հոդվածներն ու ուսումնասիրությունները, զեկուցումներն ու ճառերը, հարցազրույցներն ու ասույթները։ Ի՜նչ խոսք, դրանք մեկ առ մեկ ընթերցել էիր ժամանակին, երբ նա դեռ կար, ընթերցել էիր և հաճախ հայտնել զարմանքդ ու հիացմունքդ, երբեմն նաև տարակուսանքդ ու առարկությունդ։

Սակայն այժմյան ընթերցումդ ա՜յլ է։

Այժմ սկսում է գործել տարածության օրենքը։

Զգում ես տպավորություններդ համադրել, ընդհանրացնել, զարմանքդ ու հիացմունքդ իմաստավորել, Պարույր Սևակին ու նրա ստեղծագործությունը դիտել հայ գրականության, մասնավորապես պոեզիայի պատմական զարգացման ընթացքի մեջ, որոշել այդ բացառիկ զորեղ անհատականության տեղն ու դերը մեր գեղարվեստական մտածողության համակարգում։

Մեծ բանաստեղծները ծնվում են պատմական մեծ հեղաբեկումների բովում։

Պ. Սևակը հանդես եկավ Հայրենական պատերազմի սկզբին, ճանաչվեց որպես բանաստեղծ «կամոքն աստծո» և բարձրացավ այդ ժամանակաշրջանի հայ պոեզիայի մակարդակին։ Առաջին իսկ բանաստեղծություններում նա դրսևորեց իր ստեղծագործական անհատականության առանձնահատուկ գծերը, որոնք, սակայն, դեռ որակ չէին կազմում։ Պարույրսևակյան որակը սկսվում է «Նորից քեզ հետ» ժողովածուով և խորանում, բյուրեղանում է «Անլռելի Զանգակատուն» և «Եռաձայն պատարագ» պոեմներում, «Մարդը ափի մեջ», և, մանավանդ, «Եղիցի լույս» գրքերում, նշանավորելով հայ պոեզիայի

նոր աստիճանը Չարենցից հետո։ Արվեստի, գրականության ճշմարիտ արժեքները ծնվում են մեծ ասելիքի բուռն, անդիմադրելի պահանջից։ Առաջնայինը ինչ-ն է և ապա ինչպես-ը։ Այդ է հավաստում Պարույր Սևակը թե՛ որպես բանաստեղծ-ստեղծագործող և թե՛ որպես տեսաբան-գրականագետ։

Ամենից առաջ խոր արմատներով նա կապված է իր ժողովրդի, նրա պատմության հետ։ Հայրենիքի անցյալի գեղարվեստա-փիլիսոփայական իմաստավորումը, որ 50-ական թվականների մեր գրական սերնդի պատմական առաքելությունն էր, առավել ցայտուն դրսևորվեց Պարույր Սևակի ստեղծագործության մեջ։ Արդի հայ պոեզիան նա հարստացրեց պատմա-գեղարվեստական ժանրի այնպիսի գլուխգործոցներով, ինչպիսիք են «Անլռելի Ջանգակատուն», «Եվ այր մի՝ Մաշտոց անուն», «Եռաձայն պատարագ» պոեմները։ Անցյալի հերոսականն ու ողբերգականը նա դիտեց և իմաստավորեց այն բարձունքից, որի վրա կանգնած էր մեր ժողովուրդը քսաներորդ դարի երկրորդ կեսին։ Այդ բարձունքից դիտելով, նա հավաստեց թրի դեմ՝ գրչի, բռնության դեմ՝ բանականության, ոճիրի դեմ՝ հանճարի հաղթանակը։

Պարույր Սևակի ասելիքը չի սահմանափակվել ազգայինի շրջանակներում, նա դուրս է եկել և թևածել համամարդկայինի-համաշխարհայինի ոլորտներում։ Ազգայինի և համամարդկայինի ներդաշնակումը նա համարում էր մեր ժողովրդի աշխարհայեցությանը ներհատուկ. «Ես բաց ճակատով և լեցուն հպարտությամբ պիտի վկայեմ,— գրել է բանաստեղծը,— որ ես հայ եմ՝ զավակը մի ժողովրդի, որ իրոք շատ բան է տվել աշխարհի քաղաքակրթությանը և տվածի մեջ էլ՝ ինձ համար ամենաթանկն ու ամենագեղեցիկը՝ իր այլասիրական այն ոգին, որ եվրոպացիք ալտրուիզմ են կոչում, իսկ մեր երկրում գերադասելի է կոչել ինտերնացիոնալիզմ»։

Ինչպես հայրենասիրությունը, այնպես էլ հումանիզմը (որոնք ո՛չ միայն իրար չեն բացառում, այլև պայմանավորված են միմյանցով) կազմում են Պարույր Սևակի ստեղծագործության պաթոսը։ Վերջին տարիների նրա մի շարք բանաստեղծությունները համակված են խոր տագնապով ատոմային դարաշրջանի աշխարհի համար, մարդկության ճակատագրի համար («Առաջադրանք համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին և ճշգրիտ սարքերին», «Անորոշություն», «Դիմում պահանջելու պես», «Ուղում եմ», «Բարևս»)։ Առաջնային է դառնում մարդու և մարդկայնության խնդիրը, որին և նա նվիրել է բանաստեղծությունների մի այլ շարք։ Եվ կպատշաճեր դրան տալ «Մարդերգություն» խորագիրը։

Մարդն է արարիչը երկրի և երկնի, նրա ձեռքին է աշխարհի բախտը, իր բախտը, մարդկության ապագան։ Սրանով պիտի բացատրել բանաստեղծի այրող ատելությունը մարդու մեջ դեռևս գոյություն ունեցող արատների նկատմամբ և հրճվանքն ու հիացումը մարդկային առաքինությունների հանդեպ։ Ի վերջո մարդկայնությունը պիտի հաղթանակի։ Այս հավատն է ներշնչում Պարույր Սևակի «Մարդերգությունը»։

Եվ ընդհանրապես նրա ստեղծագործությունը օժտված է ներգործուն հզոր ուժով, որով և հատկանշվում է մեծ արվեստը։

Պարույր Սևակը գրավում, հմայում է խոստովանության նման ճշմարիտ ու անկեղծ իր խոսքով, երազանքների և իդեալների պատանեկան մաքրությամբ, փիլիսոփայական-վերլուծող մտքի անպարագիծ սլացումներով, բարի հումորով և սարկաստիկ ծաղրով։ Նրա հմայքի մի այլ գաղտնիքը պետք է որոնել տաղաչափական ազատ, անկաշկանդ, բազմազան ձևերի, ստեղծագործական երևակայության երփներանգ փայլատակումների, ասոցիացիաների և պատկերավոր մտածողության ինքնատիպ, անակնկալ և անկրկնելի գյուտերի մեջ... Պարույր Սևակի ստեղծագործություններում ի հայտ են գալիս հայոց լեզվի՝ ինչպես ոսկեդեղիկ գրաբարի, այնպես էլ ժամանակակից գրական և խոսակցական հայերենի բոլոր հրապույրներն ու հնարավորությունները։

Պարույր Սևակը հավաստում էր այն ճշմարտությունը, որ «Գրական երևույթներն իրենց իսկական արժեքն ստանում են գրականության ընդհանուր զարգացումը կշռող նժարների վրա», և որ՝ գրողի «ամենապարտադիր մի ճատկանիշը դարաշրջանի զգացողությունն է»։

Ինքը՝ Պարույր Սևակը, մեծապես օժտված էր «դարաշրջանի զգացողությամբ», և նրա ստեղծագործությունը իր ձևով ու բովանդակությամբ համարձակ կարող է դրվել մեր դարաշրջանի գրականության «ընդհանուր զարգացումը կշռող նժարների վրա»։

Լինելով իսկական նորարար, նա վճռակաորեն ժխտում էր ոմանց կողմից նորի և ավանդականի միջև գրվող չինական պարիսպը։ Նա մեր պոեզիան նոր աստիճանի բարձրացրեց՝ յուրացնելով և զարգացնելով հայրենական և համաշխարհային դասականների ավանդները՝ Նարեկացուց մինչև Սիամանթո ու Չարենց, Ուիտմեն և Ապոլիներ։

Պարույր Սևակը նաև հայ և համաշխարհային գրականությանը քաջատեղյակ գրականագետ էր, ներհուն մտածող, հմուտ բանասեր։

Վերջին երկու տասնամյակի հայ գրա-պատմական մտքի ամենատաղանդավոր, ամենավառ արտահայտություններից են նրա՝ «Տերյանը պա՞նանչում է», «Սրի դեմ՝ գրիչ» (Մեսրոպ Մաշտոց), «Հանուն և ընդդեմ «ռեալիզմի նախահիմքերս»-ի», «Դիմանկարի փոխարեն» (Կոմիտաս), «Ռումանյանի հետ» և շատ այլ հոդվածներ, Հայաստանի գրողների V համագումարում արտասանած ճառը, Չարենցի ծննդյան 70-ամյակին նվիրված զեկուցումը և մանավանդ «Սայաթ-Նովա» մենագրությունը, որի տեղը հայագիտության դասական երկերի շարքումն է։

Հայ ժողովրդի ստեղծագործական հանճարի դրսևորումներից յուրաքանչյուրին անդրադառնալով, լինի դա Մաշտոցը, Սայաթ-Նովան, Կոմիտասը, Ռումանյանը թե Չարենցը, Պարույր Սևակը հանգես է բերում երևույթների ընկալման զարմանալի ներհուն զգացողություն, կատարում է ինքնատիպ բացահայտումներ, խոր ընդհանրացումներ, միշտ հիացնելով իր մտքի համարձակ թռիչքներով, կուռ տրամաբանությամբ՝ սրելով ու սնելով ընթերցողի միտքը և կրկին ու կրկին ցույց տալով հայոց լեզվի հրապույրներն ու հնարները։

Նվ միշտ անցյալի պատմական թե գրական երևույթները նա գիտում է և քննում այսօրվա բարձունքներից, արդի հայ մշակույթի ու գրականության զարգացման շահերի տեսակետից։

Իր գրական հոդվածների և ելույթների մի զգալի մասում Պարույր Սևակի հիմնական մտահոգությունը եղել է՝ սովետահայ գրականությունը դուրս բերել տեղայնության անձուկ շրջանակներից և բարձրացնել դարաշրջանի ընդհանուր զարգացման մակարդակին. հիշեցնելով, որ այժմ «Ինչպես գիտության, այնպես էլ գրականության զարգացումը ընդհանուր-համաշխարհային բնույթ է կրում...»։

Նվ որպես ավանդ իր կրտսեր գրչակիցներին, նա ազդարարում է. «Ժողովուրդների (մանավանդ փոքր ժողովուրդների) հարատևման երկու եղանակ կա միայն. կա՛մ ընթանալ համամարդկային մաղտակերության հետ զուգամայլ. կա՛մ ապրել նախնական-վաչկատնային կյանքով։ Այս վերջին համփան մեր առջև փակ է և փակ է արդեն ավելի քան 1500 տարի»։

Միշտ առջևից ընթացող, առաջ նայող, միշտ գնալի առաջ կանչող...

Այսպիսին էր Պարույր Սևակը՝ մեծ բանաստեղծը, իր ժողովրդի արժանի զավակը, դարաշրջանի վսեմ գաղափարների շեփորահարն ու ազնիվ աշխարհաքաղաքացին, լուսեղեն գալիքի անհողդողդ հավատավորը։

Նա կայծակնահար ընկավ իր հզոր, շռայլ տաղանդի ամենափթթուն պահին, երբ լեփ-լեցուն էր ստեղծագործական գեղեցիկ մտահղացումներով ու գիտական ծրագրերով, երբ դեռ այնքա՜ն շատ ասելիք ուներ։

Կորուստն անչափ մեծ է և անվերադարձ։

Անփարատելի վշտի միակ հնարավոր սփոփանքը Պարույր Սևակի թողած ծանրակշիռ, խորախորհուրդ հոգևոր ժառանգությունն է՝ հավիտյանս ժամանակների ավանդված հերոսներին, որոնք նրա նվիրական անունը պիտի հիշեն օրինակելի հպարտությամբ, ակնածանքով ու սիրով։

Ա. Մ. ԻՆՃԻԿՅԱՆ